

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ՏԵԼԻՉԵԱՆ ԽՆԴԻՐԸ****Թ. - Ժ.****Ս. ԳԻՐՔ ԵՒ ԲԱԲԵԼՈՆ**

Ինչպէս մեր յառաջ բերած բնագիրներէն կարելի է տեսնել, Դիամադ՝ խաւար- քառասային նախնական ջուրն է: Աստուածներու դէմ կռիւ մղած միջոցին անիկա վի- շապի ձեւ կ'առնէ: Մարտով՝ լուսոյ աստուածը միայն յանձնառու կ'ըլլայ անոր դէմ ելլել: Դիամադ՝ իբր վիշապ կը բանայ իր սոսկալի երախը, բայց նախ քան զայն գո- ցելը՝ Մարտով փոթորկայոյզ քամիով կը լեցնէ անոր ներսիդին եւ ձուկի մը պէս կը կտրէ անոր մարմինը երկու մասերու, մէկ մասէն երկինք եւ միւսէն երկիրը շինելով եւ զանոնք իրարմէ երկնակամարով բաժնելով: Ինչպէս ըսինք, Դիամադ՝ նախնական ջուրն էր, խաւարամած զանգուածային ջուր: Մարտով անոր կէսը երկինքէն, որ հաս- տատութիւնն է, վեր դրաւ եւ միւս կէսը վար: Հիմա ո՞վ որ Ս. Գրոց Ծննդոց Գիրքի առաջին գլուխին 6-10 համարները դեռ աղէկ մը չէ ըմբռնած թո՛ղ նորէն կարդայ, եւ կը տեսնէ թէ ո՞րքան դիւրացաւ անոր ըմբռնումը. ահա այդ հատուածը. «(6) Եւ Աստուած ըսաւ, թո՛ղ ջուրերուն մէջ հաստատութիւն ըլլայ (Հմմտ. Յոբ. Լէ, 18, - Սաղմոս. ՃԼԶ, 5.- Երեմիա. Ժ, 12. ՄԱ, 15), որ ջուրերը-ջուրերէն զատէ: (7) Եւ Աստուած հաստատութիւնը դրաւ եւ հաստատութեան տակ եղած ջուրերը (Հմմտ. Առակ. Ը. 28) հաստատութեան վրայ եղած ջուրերէն զատեց (Սաղմոս. ՃԽԸ, 4) ու այնպէս եղաւ: (8) Եւ Աստուած հաս- տատութիւնը երկինք կոչեց եւ երեկոյ եղաւ...: (9) Եւ Աստուած ըսաւ, երկինքին տակ եղած ջուրերը թո՛ղ ժողվուին եւայլն...: (10) Եւ Աստուած ցամաքին անունը երկիր դրաւ...»:

Այսպէս երկինքն ու երկիրը ստեղծելէն ետքը, Մարտով՝ ըստ բաբելական առաս- պելին կը դնէ երկինքի վրայ լուսին, արեւ եւ լուսաւորներ, զարդարելով նաեւ երկիրը ճոխ բուսականութեամբ եւ կենդանիներով, մինչեւ որ առաջին մարդը կը ստեղծուի:

Փրօֆ. Էօդլի արդէն իր անգամ մը յիշուած գրքոյկին մէջ խօսելով Քառսի մա- սին, կ'ըսէ իրաւամբ. «Աստուծոյ ստեղծագործական զօրութենէ անկախ նիւթի մը գո- յութեան հաւատքը չկրնար Իսրայէլի կրօնին հողին վրայ աճած ըլլալ, որ մանաւանդ Եսայիի, Երեմիայի եւ այլոց օրով միաստուածեան է, հետեւաբար նիւթի եւ զօրութեան հակառակ սկզբունքները, որ զայն երկուութեան (dualisme) պիտի տանէին, կը մերժէ ան»: Նման տեսութիւն մը կը յայտնէ նաեւ Հին-Կտակարանեան գիտութեան ամենամեծ ներկայացուցիչներէն մէկը՝ Վելհաուզէն: Իրաւ է որ շատերուն բազմաստուածութեան կասկածներ ներշնչած են Հին Կտակարանի այնպիսի հատուածներ, որպիսիք են օրի- նակի համար Ծննդ. Գիրքի Ա, 26, ուր կ'ըսուի. «Արասցով մարդ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան մեռում» - «Մեր պատկերին եւ մեզի նման մարդ ստեղծենք»: Ինչո՞ւ հոս արդեօք յոգնակի գործածուած է եթէ ըսողը մէկ էութիւն է: Եւ կամ թէ ի՞նչպէս կրը- նար Ծննդոց Գիրքին հեղինակը Եսայիէին Ծննդ. Գ. 22-ի խօսքը վերագրել, ուր Տէրը կ'ըսէ. «Ահա Ադամ մեզմէ մէկուն պէս եղաւ, բարին ու չարը ճանչնալու համար»: Փրօֆ. Ֆրիտրիխ Տելիչ նոյնիսկ աւելի առաջ երթալով Ծննդոց Ա. 27-ին մէջ աստուածներու եւ աստուածուհիներու յիշատակութիւն կ'ուզէ տեսնել. «Եւ Աստուած Իր պատկերով

ստեղծեց մարդը, Աստուծոյ պատկերով ստեղծեց զայն, արու եւ էգ ստեղծեց զանոնք»։ Մեկնաբանական արուեստն սակայն այս եւ նման դժուարութիւններ կրնայ մեծ դիւրութեամբ պարզել։ Ամենէն առաջ ընթերցողը պէտք է նկատի առնէ Եսայեայ ԽԶ, 5. ուր կ'ըսուի, «Զիս որո՞ւն կը նմանցնէք եւ որո՞ւն հաւասար կը սեպէք», ապա նոյն գլուխի 9-րդ ուր կ'ըսուի, «Ի յաւիտենից եղած առջի բաները յիշեցէք, քանզի ես եմ Աստուած եւ ինձ ուրիշն չկայ...» եւայլն։ Ուրեմն հոս եւ ուրիշ բազմաթիւ տեղեր միաստուածութեան գաղափարը կը քարոզուի։ Հետեւաբար, ըստ մեկնաբանից, հոն ուր յոգնակի դերանուն կը գործածուի չկրնար ակնարկուիլ աստուածներուն։ Այս յոգնակին պարզապէս այսպէս կոչուած վեհափառական յոգնակի = pluratis majestaticus է։ Մինչեւ օրս ալ արքաներն ու վեհապետները կը գործածեն զայն իրենց պաշտօնական խօսակցութեանց միջոցին։

Հարկաւ եղած է նաեւ ժամանակ մը, ո՛ւր Իսրայէլի նախնիքը այլեւս Եանվէ չէին պաշտեր, այլ ուրիշ աստուածութիւններ, այսպէս օրինակի համար Աբրահամին նախահայրերը։ Աբրահամ, որ դարձեալ Բաբելոնի քաղաքակրթական ազդեցութեան տակ էր։ Բաբելոնի պաշտպան Աստուած Մարտութիւնը ի՞նչպէս յայտնի չըլլար ամենուն, քանի որ ժողովուրդներու բոլոր յաջողութիւնները աստուածներուն կ'ընծայուէին այն ատենները։ Այս է պատճառը՝ որ բաբելոնեան Մարտութիւնը եւ հրէից ազգային Աստուած Եանվէն մէջ այնքան մեծ նմանութիւններ կը գտնեն Հին Կտակարանի հեղինակներէն ոմանք։ Ով որ Դիւմադի եւ Մարտութիւնը վերոյիշեալ պատմութիւնները կարդացած է, անոր համար պարզ է թէ ի՞նչ կը նշանակէ Սաղմ. 13-14-ը «Դուն քու զօրութեամբ ծովը պատնեցիր, վիշապներուն գլուխները ջուրերուն մէջ փշրեցիր։ Դուն ջարդեցիր Լեւիաթանին (ջուրի հրէշ) գլուխները...»։

Տեսէք թէ ի՞նչ կ'ըսէ Սաղմոս ԶԹ. 10. «Դուն ճնշեցիր ռահապը (վիշապ) խոցելով, քու հզօր բազուկովդ ցրուեցիր քու թշնամիներդ», նոյն Սաղմոս, 7. «Աստուած խիստ զարհուրելի է սուրբերուն ժողովին մէջ եւ ահաւոր է ամէն իր շուրջը եղողներուն»։ Ո՛չ նուազ պարզութեամբ կը խօսուի Յոբայ Գիրքին մէջ, ուր Թ. 13. կ'ըսուի, «Աստուած իր բարկութիւնը ետ չդարձներ եւ վիշապի (ռահապ) օգնականները կը խոնարհին անոր առաջ»։ 17. «Որովհետեւ փոթորիկով զիս ճնշեց...»։ Յոբ. ԻԶ. 12, «Իր զօրութեամբ ծովը զարկաւ ան եւ իր խելքով խորտակեց զռահապ»։ Եսայի ալ Տիրոջ կը դիմէ հետեւեալ բառերով, ՄԱ, 9. «Արթնցի՛ր, արթնցի՛ր ո՛վ Տիրոջ բազուկ, զօրութիւն հագիր, արթնցի՛ր առաջին օրերուն պէս, վաղուց հետէ անցած դարերուն պէս, Դուն Ան չե՞ս որ ռահապը (վիշապ) կտրատեցիր եւ հրէշը (եբրայերէն՝ Դաննին) ընդմիջեցիր»։

Այս վիշապաբաղ Մարտութիւն քարաքանդակ պատկերը գտած են Գերման հնախօսներ։ Այս քանդակապատկերին վրայ Մարտութիւնը մեզ կը ներկայանայ իր ամբողջ փառքով։ Ինչպէս անոր գլխարկը նոյնպէս ալ վերէն վար ամբողջ մարմինն ծածկող զգեստը զարդարուած են անուաճեւ կլոր շրջանակներով։ Ան ունի երկար մօրուք ու պէխեր, ինչպէս նաեւ խոշոր աչքեր ու ականջ, որոնք խելօքութեան նշաններ կը սեպուէին։ Կուրծքի վրայ ծալուած ձախ ձեռքին մէջ բռնած է Մարտութիւնը շրջանակ մը եւ պզտիկ ու կարճ գաւազան մը։ Աջ ձեռքը յենած է աղեղի մը, իսկ ոտքերուն տակ պառկած է զսպուած վիշապը։

Տեսանք արդէն, թէ Բաբելոնեան բնագրերուն մէջ Դիւմադ քառասային վիճակի մէջ գտնուող ջուրը կը նշանակէ, Ս. Գրոց եբրայական բնագիրն ալ խաւարամած ջրային քառսը Դըհօմ (Դիւմադ) կ'անուանէ։ Այս զանգուածը ամենէն առաջ լոյսէն կը ճեղքուի եւ երկինք ու երկիր, արեւ, լուսին եւ աստղեր կը ստեղծուին։ Երկիրը բոյսերով եւ կենդանիներով կը զարդարուի եւ վերջապէս մարդս կը ստեղծուի։

Այո՛, այս բոլոր նմանությունները չենք կրնար ուրանալ. պէտք չէ ուրանանք սակայն նաեւ, որ մինչդեռ բաբելոնեան աւանդութիւնը մեզի բազմաստուածեան ժխորի մը պատկերը կը ներկայացնէ, Իսրայէլի կրօնը միաստուածութեան մաքուր գաղափարը կը պարզէ մարդկութեան պատմութեան մէջ առաջին անգամ: Այս պարագան պէտք չէ մոռնան Տելիշ եւ իր հետեւողները:

Մարտոնի եւ Դիամադի կոռւին նմանություններ կարելի է գտնել ո՛չ միայն Հին, այլ եւ Նոր Կտակարանի մէջ: Զէ՞ որ հոս ալ Միքայէլ հրեշտակապետ կը կոռւի «անդունդի գազանին, հինաւուրց օձին հետ, որ չար ոգի կամ սատանայ կը կոչուի»:

Ընթերցողները անշուշտ տեսած կ'ըլլան Ս. Գէորգի պատկերը, որ քաջարի սուրբը կը ներկայացնէ ամեհի նժոյգի մը վրայ նստած, ձեռքը երկար նիզակ մը, որով կը պատռէ ահռելի վիշապի մը բերանը՝ աներկիւղ կերպով անոր վրայ յարձակելով:

Եթէ այս պատկերները մենք համեմատենք Մարտոնի եւ Դիամադի բաբելոնեան քարաքանդակներուն հետ՝ շատ մը նմանություններ կը տեսնենք: Այսպէս, օրինակի համար, քարաքանդակի մը վրայ Մարտոն ներկայացուած է յաղթանդամ ըմբիշի մը կերպարանքով ձեռքերուն մէջ եռաժանիներ-կայծակներ բռնած, կողքին նիզակ եւ վեց թեւերով զարդարուած, մինչ Դիամադ ահռելի երախով հրէշ մէ, որուն սուր ակռաները դուրս կը ցայտեն եւ երկթեւեան վիշապի կամ գազանի կերպարանքով կը ներկայանայ:

Տելիշի կարծիքով՝ Մարտոնի եւ Դիամադի կոռւը լուսոյ եւ խաւարի կոռւն է: Յայտնի է որ բաբելոնեան դիցաբանութեան մէջ Մարտոն առաւօտեան արեւի, գարնանային կենդանացուցիչ արեւի, առհասարակ օրուան լուսոյ աստուածն է, մինչ Դիամադ՝ խաւարապատ զանգուած մը կը ներկայացնէ: Հռչակաւոր սեմագէտ եւ հայագէտ Փրօֆ. Ենսէն, քետական (Հիթիթներու կամ Խաթերու) արձանագրութիւններու առեղծուածը առաջին անգամ լուծել փորձող Մարպուրկի համալսարանին սրամիտ ուսուցչապետը, Դիամադի մասին կը գրէ. «Պերոսոս զայն կանացի էութիւն մը կը համարի. անիկա աստուածներու մայրն է, ունի ամուսին մը եւ սիրական մը, եւ ամբողջ ասորա-բաբելական գրականութեան մէջ այս էութիւնը կինն տարբեր արարածի ձեւով շնորհալանար»: Այս որոշումը ուղիղ չէ սակայն. ով որ մեր թարգմանած բաբելոնեան ստեղծագործութեան բնագիրները կարդաց, գիտէ արդէն՝ որ բաբելացիք Դիամադը ո՛չ միայն աստուածամայր, այլ նաեւ վիշապամայր եւ իժամայր կը ներկայացնէին. ան էր, որ իրեն օգնական վիշապներ եւ իժեր ծնաւ: Ուրեմն՝ եթէ էգ առիւծները՝ կորիւններ կը ծնին եւ կիները՝ մանուկներ, այս պատճառով վիշապներ եւ իժեր ծնողն՝ ինք ալ իբր վիշապ կամ իժ ալ երեւակայուած պիտի ըլլայ: Մինչեւ այժմ գտնուած քարաքանդակներ ալ կը հաստատեն այս տեսութիւնը: Ո՛չ միայն Փրօֆ. Տելիշ. այլ եւ Յիմմեր եւ բազմաթիւ այլ ասորագէտներ կը հաստատեն զայս: Կասկածելի է միայն երրորդ քարաքանդակ մը, ուր Դիամադ իբր գազանագլուխ թռչուն կը ներկայանայ. բայց ամենայն հաւանականութեամբ ան ալ Մարտոնի եւ Դիամադի կոռւը կը ներկայացնէ:

Ահաւասիկ Ս. Գիրքի մէջ եղած ստեղծագործութեան երկու շերտերը.

Գիրք Ծննդոց
Գլ. Ա.

1) Ամենէն առաջ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը եւ երկիրը քառասային

Գիրք Ծննդոց
Գլ. Բ.

4) Այն օրը որ Տէր Աստուած երկիրն ու երկինքը ըրաւ, դաշտին բոլոր բոյսերը դեռ

վիճակ մ'ունէր եւ խաւար կը տիրէր...

26) Եւ Աստուած ըսաւ. «մեր պատկերի եւ մեր նմանութեան պէս մարդ շինեմք...»

27) Եւ Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը, Աստուծոյ պատկերով ստեղծեց զայն, արու եւ էգ ստեղծեց զանոնք...:

24) Եւ ըսաւ Աստուած. «Երկիրը թող հանէ շնչաւոր կենդանի իր տեսակին պէս, անասուններ, սողուններ եւ երկրի գազաններ...»:

20) Եւ Աստուած ըսաւ. «Թող ջուրերը կենդանութիւն շունչ ունեցող շատ սողուններ հանեն... ու ամէն թեւաւոր թռչուն իր տեսակին պէս»:

երկրին վրայ չկային 5) Եւ դաշտին բոլոր խոտերը դեռ չէին բուսած. որովհետեւ, Տէր Աստուած երկրի վրայ տակաւին անձրեւ տեղացուցած չէր եւ գետինը մշակելու համար մարդ չկար, 6) Երկրէն շոգի կ'ելլէր եւ գետնի ամբողջ երեսը կը ջրէր: 7) Եւ Տէր Աստուած գետնի հողէն շինեց մարդը եւ անոր ունեցեալն մէջ կենդանութեան շունչ փչեց եւ մարդը կենդանի հոգի եղաւ...:

18) Եւ Տէր Աստուած ըսաւ աղէկ չէ որ Ադամ միմակ ըլլայ, անոր օգնական մը ընեմ իրեն յարմար (շարունակութիւնը տե՛ս, տուն 212.)

17) Եւ Տէր Աստուած դաշտին բոլոր գազանները եւ երկինքին բոլոր թռչունները հողէն շինեց:

Այժմ թողունք Ստեղծագործութեան պատմութիւնն ալ, եւ անցնինք նախամարդոց դրախտէն արտաքսումին:

Առաջին մեղաւորները. Ինչպէս եբրայեցիք, նոյնպէս ալ բաբելացիք եւ այլ ժողովուրդներ, մարդկային հիւանդութիւններն ու ցաւերը մեղաց արդիւնք կը համարին ու երբ բաբելացի մոգ մը հիւանդի մը քով կը կոչուի ան չգոհանար միայն տեղեկանալով թէ հիւանդը մարդ սպանած կամ գողութիւն ըրած է, այլ կը շարունակէ հարցնել թէ ան մերկ հագուեցուցած չէ՞, գիրքի մը լոյս ցուցուցած չէ՞, սուտ խօսած է եւայլն:

Ս. Գիրքի մէջ շատ գեղեցիկ կերպով նկարագրուած է՝ թէ ինչպէս Եւա օձէն խաբւած է եւ պատճառ եղած է անոր խորհրդով Ադամն ալ մեղսակից ընելու, յորդորելով զայն իրեն պէս արգիլուած ծառին պտուղէն ուտելու (տե՛ս, Ծննդ. Գլ. Գ.): Այս պատմութեան մէջ երկու ծառեր կարեւոր դեր կը խաղան: Ըստ Ծննդոց Բ. 8-ի՝ Աստուած Եդեմի մէջ պարտէզ մը կը տնկէ եւ մարդը հոն կը դնէ: Ըստ յաջորդ (9) տան՝ Աստուած միւս ծառերու շարքին մէջ կը ստեղծէ նաեւ «Կենաց ծառը», եւ «Բարին ու չարը գիտնալու ծառը» կը տեղաւորէ ուղղակի պարտէզին մէջտեղը: Ծննդոց Գ. 22 կ'ըսուի «Եւ Տէր Աստուած ըսաւ. «Ահա Ադամ մեզմէ մէկուն պէս եղաւ բարին ու չարը ճանչնալու տեսակէտէն եւ այժմ չըլլայ որ իր ձեռքն երկնցնէ եւ կենաց ծառէն ալ ուտէ»: Ծննդոց Գ. 3-ի համաձայն սակայն՝ Աստուած կը հրամայէ նաեւ. «Բայց պարտէզին մէջտեղը եղած ծառին պտուղէն... մի՛ ուտէք եւ անոր մի՛ դպչիք որ չմեռնիք»:

Այս բոլոր հատուածներուն համաձայն Աստուած կ'արգիլէ «Կենաց ծառէն» ուտել: Տարբեր տրամադրութեան մը արդիւնք է սակայն՝ Ծննդոց Բ. 16-ը, ուր Աստուած ո՛չ թէ կենաց ծառին պտուղը կ'արգիլէ, այլ միմիայն բարոյ եւ չարի գիտութեան ծառինը: «Եւ Տէր Աստուած պատուիրեց մարդուն ըսելով. պարտէզին ԱՄԷՆ ԾԱՌԷՆ համարձակ կէ՛ր, բայց բարոյ եւ գիտութեան ծառէն մի՛ ուտեր, որովհետեւ անկէ կերած օրդ պիտի մեռնիս» (Ծննդ. Բ. 16-17): Այս տարբերութիւններն եւս կարելի է բացատրել երկու տարբեր պատմութիւններու ձուլումով:

Բաբելացիք եւս ունէին իրենց մեղաւոր մարդկութեան անկումին պատմութիւնը:

Ահա թէ ի՞նչ կը ներկայացնէ զայն կնիքի մը վրայ փորագրուած պատկեր մը, որ Բաբելոնէն ելած է: Պատկերին մէջտեղը գծուած է ծառ մը, որը մէկ կողմը Յիսկ միւս կողմը 4 ճիւղեր ունի: Ծիւղերէն վար ծառի երկու կողմէն երկու հատ պտուղներ կախուած են: Ծառին ձախ կողմը, քառակուսի աթոռի մը վրայ նստած է կին մը ձախ ձեռքը դէպի պտուղը երկնցնելով: Անոր ետեւ գծուած է օձի պատկեր մը: Ծառի աջ կողմը նման քառակուսի աթոռի մը վրայ նստած է այր մը աջ ձեռքը դէպի ծառը երկնցնելով: Այս մարդուն գլխուն երկու կողմերը եղջիւրներ կան, որոնք ինչպէս Հին Կտակարանի նոյնպէս ալ բաբելացւոց մէջ զօրութեան նշան կը սեպուէին: Ըստ Տելիչի, այս պատկերը քանդակողը ամենէն աւելի բացորոշ կացուցեր է իր գծած անձերու սեռը անով, որ այր մարդուն գլուխը եղջիւրներով զարդարած է:

Այս կնիքի պատկերի մասին Դիլէ կ'ըսէ, որ ան «կը ներկայացնէ աստուածութիւն մը իգական կամ արական սեռի երկրպագուին հետ, որ Կեանքի ծառին պտուղը կը ճաշակէ»։ Դիլէ զայն «անմահութեան յուսոյ պատկեր» մը կը համարի: Հոմէլ ալ կ'ընդունի որ այդ պատկերը կենաց կամ ծննդեան խորհրդանշանը կը ներկայացնէ եւ կը կարծէ որ գծուած ծառը հաւանաբար էրիտուի նոճիին պատկերն է: Եէնսէն ալ կը յայտարարէ որ «Եթէ պատկերս նախամարդոց դրախտէ արտաքսումին հետ կապ ունի, այն ատեն աստուած մը կ'արգիլէ առաջին կնոջ կենաց ծառէն ճաշակել: Հոմէլ եւ Եէնսէն ալ կ'ընդունին Տելիչի հետ՝ որ կնոջ ետեւը գտնուող ոլորուն գիծը օձի պատկեր մ'է, մինչ Հոլցիմկեռ եւ Քէօնիկ զայն բաժանման կամ զարդագիծ մը կը սեպեն: Առաջիններուն համաձայն են ասորագէտներուն մեծ մասը, ի շարս այլոց Յիմմերն եւ Հաուրդ (Ամերիկա):

Թողունք այժմ այս պատմութիւնն եւս եւ անցնինք բաբելական դժոխքի գաղափարին: Երբ մարդ կը մեռնի, անոր հոգին հին ատեններ այլ եւ այլ ժողովուրդներ տարբեր տեսակի վայրեր կը ղրկէին: Ոմանք զայն այնպիսի երկիր մը կը ճամբէին, ուրկէ գալիք չունէր եւ զայն շօլ կ'անուանէին (Եբրայեցիք), այլք Հաաէս կ'իջեցնէին զայն (Յոյնք): Եբրայեցիք եւ բաբելացիք շատ տխուր գիծերով կը պատկերացնէին հոգիներու վերջին օթեւանը: Հոն ամէն ինչ փոշիով ծածկուած էր, դուռները միշտ գոց, անթափանցելի մթութիւն կը տիրէր ամենուրեք: Հոգիները իբր ստուերներ կը թռչկոտէին ասդին անդին: Անտանելի տխուր էր Շէօլի կեանքը: Զարմանալի չէ այս պատճառով որ եբրայեցիք եւ բաբելացիք երկար կեանքը ամենէն մեծ բարիք կը համարէին: Գերմաններու բացած աստուածներու թափօրին ճամբան սալայատակուած էր մեծ քարերով, որոց վրայ կար սա՛ արձանագրութիւնը «Ո՛վ, Տէր Մարտուք, երկառ կեանք պարգեւէ՛ մեզ»: Կիլկամէշի վէպի 12 տախտակներուն մէջ կը նկարագրուի բաբելացւոց պատկերացուցած ստորերկրեայ կամ անդիի աշխարհը: Հոս արդարներուն յատուկ բնակարան յատկացուած է, ուր անոնք հանգստաւէտ վայրեր կը հանգչին եւ վճիտ, յստակ ջուր կը խմեն»: Վարքայի, Նիբբուրի, եւ Բաբելոնի մէջ շարք մը բաբելական դագաղներ գտնուած են: Պերլինի Կայսերական Թանգարաններու Վարչութիւնը ասկէ քանի մը տարի առաջ այսպիսի դագաղէ մը ելած ձուածեւ կճաքար մը գնած է, որով դագաղին տէրը կ'աղաչէ որ ան անշարժ թողուի: Այս արձանագրութիւնը կը վերջանայ հետեւեալ բացորոշ բառերով. «Վերին աշխարհին մէջ իր անունն օրհնեալ ըլլայ, սառնին աշխարհին մէջ իր մեկնեալ հոգին յստակ ջուր խմէ»: Համմուրապիի օրէնքներուն մէջ ալ ընդհակառակն ոճրագործը կը նգովուի. «Վերը թո՛ղ Աստուած զայն կենդանիներու մէջէն ջնջէ եւ վարը անոր մեկնեալ հոգիին թող ջուրէն զրկէ»: Ուրեմն ըստ Բաբելացւոց՝ Շէօլի մէջ բարերարներուն, արդարներուն համար հանգստեան անկողիններ եւ յստակ

ջուրեր կային: Ասկէ կարելի է հետեւեցնել՝ որ մեղաւորներուն յատկացեալ տեղը ո՛չ միայն փոշիոտ եւ ժանգոտ, եւ այլեւս հանգստեան վայրերէ եւ անկողիններէ եւ յստակ ջուրերէ զուրկ տեղ մ'էր: Արդէն Յոբայ գիրքին մէջ մենք կը հանդիպինք տաք, անջուր անապատի մը, որ շարերուն յատկացուած է եւ յստակ ջուր ունեցող պարտէզի մը՝ որ արդարներուն վերապահուած է: Մեր հայերէն թարգմանութիւնը Յոբ. ԻԴ, 18-ի միտքը ուղիղ չտար. բնագիրը կ'ըսէ. «Թող անոնց (մեղաւորներու շարերու) բաժինը նզովեալ ըլլայ երկրի վրայ: Ան չբռներ այգիներու ճամբան, անապատ եւ ամենէն աւելի ջերմութիւնը պիտի ոչնչացնեն զանոնք, ձիւնի ջուր պիտի չգտնեն անոնք: Գթութիւնը պիտի թողու զայն, Որդե՛րը պիտի լափեն զայն, ան չպիտի յիշուի բնաւ»: Եսայի ԿԶ. 24-ի մէջ ալ կ'ըսուի. «Անոնք պիտի դուրս երթան եւ տեսնեն դիակները... Թէ ինչպէս անոնց որդերը չեն սատկիր եւ անոնց կրակը չհանգչիր եւ անոնք զգուանք կը պատճառեն բոլոր մարմիններուն»: Այժմ աւելի հասկնալի կը դառնան նաեւ Փրկչին խօսքերը: Նախ Ղուկաս Թ. 442. «... քան թէ երկու ոտք ունենալ եւ գեհեան ձգուիլ անշիջելի կրակին, մէջ, (45) ուր անոնց ոտքը չմեռնիր եւ կրակը չմարիր եւայլն»: Կը հասկնանք նաեւ այժմ աղքատ Ղազարոսի եւ ամբարիշտ հարուստի առակը, թէ ինչպէս եսամոլ եւ անգութ հարուստը կրակի եւ ջերմութեան մէջ կը պապակի, իսկ աղքատն Ղազարոս կը զուարճանայ յստակ ջուրերով լեցուն պարտիզին մէջ: Ինչե՞ր են դարձած այս յստակ ջուրն ու հանգստաւէտ անկողինները այլ եւ այլ կրօններու մէջ:

Հին Կտակարանի հրեշտակներու գաղափարը մենք կը գտնենք նաեւ Բաբելացիներուն քով: Ուշագրաւ են մանաւանդ պահապան հրեշտակներու Քերովքէներու (Չերուպիմ.) եւ Սերովքէներու (Սերաֆիմ երբ.) դերը: Այսպէս Աբլայ Ասորեստանցիին գրած նամակի մը մէջ կ'ըսուի. «Մխիթարուէ՛, ո՛վ իմ տիրոջս մայր, Բէլի եւ Նեպոյի հրեշտակը իմ տիրոջ կ'ուղեկցի». կամ Ասարհատտոնին ուղղուած գրութեան մը մէջ կ'ըսուի. «Թող մեծ աստուածները փրկութիւն եւ կեանքի հրեշտակ մը ղրկեն իմ տիրոջս...»: Քաղդէական պետութեան հիմնադիր Նապոբոլոսար եւս կը գրէ. «Ան (Մարտուք) ինծի պահապան հրեշտակ (Քերովքէ) մը ղրկեց եւ ինչ բանի որ ձեռնարկեցի յաջողցուց»: Ինչպէս Բաբելացի թագաւոր մը պատգամաւորներու ամբողջ բանակ մը ունէր, այնպէս ալ իւրաքանչիւր աստուած հրեշտակներու լեզէոն մ'ունէր իր տրամադրութեան տակ: Այս հրեշտակները մարդկային բանականութեամբ եւ արտաքինով օժտուած էին, բայց անոնք թեւաւոր էին միաժամանակ աստուածներու հրամանը օգի մէջէն անցընելով երկրաւոր մարդերուն հաղորդելու համար:

ՏՕՔԹ. 3. ԹՕՓՃԵԱՆ

Բերա - Կ. Պոլիս, 1906

(Շար. 7)